ՀՏԴ: 929:891.981Չոպանյան+070(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-266

«ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Գաղտնիք չէ, որ արվեստագիտությունը, մասնավորաբար՝ կերպարվեստագիտությունը, երաժշտագիտությունը և թատերագիտությունը, բաղկացած են երեք հիմնական բաժիններից՝ կերպարվեստի, երաժշտության և թատրոնի պատմություն, կերպարվեստի, երաժշտության և թատրոնի տեսություն, և վերջին բաժինը՝ գեղարվեստական, երաժշտական և թատերական քննադատություն:

Ակնհայտ է նաև այն անուրանալի դերը, որ կատարել է հայկական պարբերական մամուլը հայ գեղարվեստական, երաժշտական և թատերական քննադատության ձևավորման ու զարգացման, հայրենական կերպարվեստագիտության, երաժշտագիտության և թատերագիտության զարգացման գործում:

Հայկական իրականության մեջ հրատարակված թերթերն ու շաբաթաթերթերը, գրական-գեղարվեստական և երաժշտական հանդեսներն ու տարեգրքերն իրենց էջերում ոչ միայն անդրադարձել են ժամանակակից կերպարվեստին, երաժշտությանը և թատրոնին, այլև լուսաբանել են ցուցահանդեսները և համերգները, ինչպես նաև օպերային և թատերական ներկայացումները, ներկայացրել են հայ արվեստի երևելի ներկայացուցիչների ստեղծագործական դիմանկարները, քննության առել արվեստի գաղափարաոճական տարբեր ուղղությունները (ռոմանտիզմ, ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ ևն), առանձին տեսակներն ու ժանրերը: Այդ քննադատական հրապարակումների շնորհիվ պահպանվել ու մեզ են հասել հայ նկարիչների, երաժիշտների և թատերական գործիչների գործունեության և առհասարակ՝ հայկական գեղարվեստական,

երաժշտական և թատերական կյանքի վերաբերյալ շատ ուշագրավ, կարևոր ու բացառիկ տեղեկություններ, որոնց շնորհիվ է միայն հնարավոր վերականգնել հայկական գեղարվեստական, երաժշտական և թատերական կյանքի ընդհանուր պատկերը և զարգացման ընթացքը:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի Արշակ Չոպանյանի ջանքերով Փարիզում հրատարակված «Անահիտ» հանդեսը:

Եվ ահավասիկ, 2024 թ. մայիսի 17-18-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ – 2021»-ի շրջանակներում կատարվող «21T-6E077» ծածկագրով «Հայ գեղարվեստական և երաժշտական քննադատությունը XIX դարում և XX դարասկզբին (ձևավորումն ու զարգացման միտումները)» գիտական ծրագրի (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյան) շրջանակներում գումարեց «Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտական կոնֆերանսը, որի նպատակն էր՝ բացահայտել «Անահիտ» հանդեսի ներդրումը հայ արվեստագիտության՝ երաժշտագիտության, կերպարվեստագիտության, թատերագիտության և ճարտարապետագիտության, ինչպես նաև գրականագիտության ասպարեզում: Կոնֆերանսի բացումը և լիագումար նիստերը տեղի ունեցան 2024 թվականի մայիսի 17-ին՝ ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում, իսկ նիստերը՝ մայիսի 18-ին՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում[1]:

Երկօրյա կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ ինչպես Հայաստանից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտից ու ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից, բուհերից՝ Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից ևն, այնպես էլ Ռուսաստանից, Չինաստանից, Լիբանանից ու Ֆրանսիայից:

Գիտական կոնֆերանսի աշխատանքերին, արվեստի պատմաբաններից ու տեսաբաններից բացի, մասնակցեցին նաև գրականագետներ, քանի որ Արշակ Չոպանյանն ինքը գրող էր, հրապարակախոս:

---

[1] «Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտական կոնֆերանսի աշխատանքները լուսաբանվեցին զանգվածային լրատվամիջոցներում, մասնավորապես ՀՀ ԳԱԱ «Գիտություն» ամսաթերթի մայիսյան համարում (տե՛ս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի միջազգային գիտաժողովը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», № 5 (387), մայիս, 2024, էջ 1) և «Ազգ» շաբաթաթերթում (տե՛ս Աննա Ադամյան, Կայացել է «Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտաժողովը, «Ազգ», 31 մայիսի - 6 հունիսի, 2024, էջ 8):

Իր բացման ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Ասատրյանը** նշեց՝ պարբերական մամուլի ուսումնասիրությունն արվեստագիտության կարևորագույն ուղղություններից է: «Առաջին անգամ հայ ակադեմիական արվեստագիտությունն անդրադառնում է հայ պարբերական մամուլին՝ «Անահիտ» հանդեսի օրինակով: Հայտնի է, թե ինչ մեծ նշանակություն և դեր ունի հայ պարբերական մամուլն արվեստագիտության, արվեստի քննադատության ձևավորման, կայացման և զարգացման գործում: 19-րդ դարից սկսած արևմտահայ և արևելահայ մամուլը բազմիցս անդրադարձել է արվեստի և գրականության հարցերին, և շատ հաճախ այդ հրապարակումները հետազոտողների համար ձեռք են բերում սկզբնաղբյուրի նշանակություն»: Նա շեշտեց արվեստի քննադատության կարևորությունը: «Ներկայում մեր գիտնականները հեռացել են արվեստի քննադատությունից, և դա ցավոտ հարց է: Կարծում եմ, որ այս գիտաժողովը խթան կհանդիսանա, որպեսզի մեր գիտնականները գիտական հետազոտություններին զուգահեռ զբաղվեն նաև երաժշտական, թատերական և գեղարվեստական քննադատությամբ: Այս առումով գիտաժողովն ունի նաև կիրառական նշանակություն»:

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը** նշեց. «Այս միջոցառումը յուրօրինակ է՝ հաշվի առնելով «Անահիտ» հանդեսի վիթխարի դերակատարությունը հայ մշակույթի զարգացման ընթացքի լուսաբանման և հանրահռչակման գործում: Սա միջգիտակարգային գիտաժողով է, քանի որ հանդեսն ուներ գրական, գեղարվեստական և հասարակական ուղղվածություն: Հանդեսի կողմնորոշիչները մնայուն արժեքներն են՝ հայ մտավոր մշակույթը, ազգային խնդիրները և եկեղեցու դերը մշակույթի զարգացման և ժողովրդի կյանքում: Այս կողմնորոշիչներն ապահովել են հանդեսի խոշոր ներդրումը մեր մտավոր մշակույթի պատմության մեջ և նաև թողել մեզ որոշ դասեր: Փարիզում լույս տեսնող «Անահիտ» հանդեսը, երբ դեռ չունեինք պետականություն (1898-1911 թթ.), կարևորում էր հայերենը որպես գիտական լեզու և նպաստում դրա զարգացմանը, ինչը հարկ է անպայմանորեն շարունակել նաև այժմ»:

Լիագումար նիստի (17 մայիսի) *առավոտյան նիստում* Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալլիտա Դոլուխանյանը** «Հեթում Պատմիչի Երկը և նրա մանրանկարները» զեկուցման մեջ նկատեց, որ Հեթումը բանավոր իր պատմությունը թելադրել է Նիկոլա Ֆալկոն հոգևորականին, սկզբում՝ ֆրանսերեն, հետո թարգմանել լատիներեն: Հեթումի գիրքը թարգմանվել է նաև իտալերեն, անգլերեն, հոլանդերեն: Այն գրաբարի է վերածել Մկրտիչ Ավգերյանը ու տպագրել Վենետիկում 1842-ին: Բանախոսը բացահայտեց, որ Ֆրանսիայում բազմացված Հեթում պատմիչի գրքի ձեռագրերն ունեն գեղեցիկ մանրանկարներ, որոնք ներկայացնում են XIV-XV դարերի ֆրանսիական մանրանկարչությունը:

Անուրանալի է այն մեծ ու նշանակալի դերը, որ ունեցել է Արշակ Չոպանյանը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում, նշանակալի՝ նրա ներդրումը կոմիտասագիտության մեջ: «Անահիտի» էջերում Ա. Չոպանյանը մի կողմից՝ ներկայացրել է Փարիզում և Ժնևում Կոմիտասի ծավալած համերգային գործունեության լիարժեք համայնապատկերը, տպագրել տարբեր երաժիշտների կողմից Կոմիտասին նվիրված հոդվածներն ու գնահատականները, էջեր հատկացրել հուշագրություններին, մյուս կողմից՝ հրատարակել Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունները և ինքնակենսագրությունը: Այս հարցերի լուսաբանմանն էր նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյանի** «Արշակ Չոպանյանը և Կոմիտաս վարդապետը» զեկուցումը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու **Հերիքնազ Որսկանյանը** «Արշակ Չոպանյանի՝ հայ միջնադարյան բանաստեղծության արժևորման մեթոդաբանական սկզբունքները՝ ըստ «Անահիտ» հանդեսի նյութերի» բանախոսության մեջ անդրադարձավ Ա. Չոպանյանի աշխարհայացքին, գեղագիտական ըմբռնումներին՝ ձևավորված ժամանակի ամենաազդեցիկ գրականագիտական հոսանքներից մեկի՝ կուլտուր-պատմական դպրոցի գաղափարաբանությամբ: Բանախոսն ընդգծեց, որ Չոպանյանն «Անահիտ» հանդեսում հետևողականորեն տպագրել և արժևորել է հայ միջնադարյան բանաստեղծությունը, դիտարկել այն հայ և համաշխարհային մշակույթի և գրականության համապատկերի մեջ՝ որպես հայ ոգու, հայկականության արտահայտություն:

Երևանի պետական համալսարանի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Միլանի (Իտալիա) Ամբրոզիան Ակադեմիայի անդամ, Մոնպելյեյի (Ֆրանսիա) Ակադեմիայի թղթակից-անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լևոն Չուգասզյանը** հանդես եկավ «Արվեստի և ճարտարապետության հարցերը «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցումով:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, բանասիրական գիտությունների դոկտոր **Լիլիթ Արզումանյանը** «Թատրոնի հարցերը «Անահիտ» հանդեսի էջերում» բանախոսության մեջ նկատեց, որ «Անահիտ» հանդեսի էջերում թատրոնը համեմատաբար քիչ տեղ է զբաղեցրել. հպանցիկ անդրադարձներ կան Սիրանույշին, Պետրոս Ադամյանին, Հովհաննես Աբելյանին, Ռուբեն Մամուլյանին, իտալացի դերասան Նովալլին, Ալ. Շիրվանզադեի «Եվգինե» դրամային, թուրքական թատրոնի ստեղծման մասին Ադոլֆ Թալասոյի հոդվածին: «Անահիտում» է տպագրվել Ազնիվ Հրաչյայի արժեքավոր ծավալուն ինքնակենսագրականը:

Նիստը եզրափակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանի** «Տիգրան Չուխաճյանը «Անահիտ» հանդեսի էջերում» բանախոսությամբ:

Լիագումար նիստի *երեկոյան նիստում* (նիստի նախագահ՝ Աելիտա Դոլուխանյան) ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մերի Կիրակոսյանը** ««Անահիտի» և Արշակ Չոպանյանի ներդրումը Փանոս Թերլեմեզյանի գործունեության լուսաբանման գործում» զեկուցման մեջ դիտարկեց էջեր հայ մշակույթի երկու նվիրյալների փոխառնչության պատմությունից՝ բացահայտելով նկարչի գործունեության հետ կապված դեռևս անհայտ փաստեր: Արվեստաբանը գիտական շրջանառության մեջ դրեց չլուսաբանված մի դիմանկարի ստեղծման հետ կապված տեղեկություններ, որոնք երևան եկան Ա. Չոպանյանի անտիպ գրվածքի, նրան ուղղված նամակների և ժամանակին Փարիզում հրատարակված տարեգրքի հետազոտման շնորհիվ:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վանո Եղիազարյանը** ներկայացրեց «Հայրենների հրապարակումը «Անահիտ» հանդեսի 1902 թվականի համարներում» զեկուցումը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր **Սուսաննա Հովհաննիսյանը** «Ռուս գրականությունը «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցման մեջ քննության առավ ռուս և համաշխարհային գրականության անդրադարձները՝ Շեքսպիրի, Սերվանտեսի, Տասսոյի, Ֆլոբերի, Միցկևիչի, Գյոթեի, Բոդլերի, Մարիա դը Հերեդիայի, Ա. Նեգրիի, Էսքիլեսի, Հաֆիզի և Ռումիի, Շելլի և Էդգար Պոյի, Պուշկինի (դրամաները), Չեխովի, Տուրգենևի, Դոստոևսկու երկերի հայերեն թարգմանությունների ու դրանց մասին քննադատականների տպագրությունը հանդեսի էջերում և դրանց վերլուծությունը: «Անահիտում» ներկայացավ նաև ռուս քննադատական միտքը՝ մասնավորապես Տուրգենևի գրականագիտական ուսումնասիրությամբ՝ գրված Շեքսպիրի «Համլետի» և Սերվանտեսի և «Տոն Քիշոտի» (Դոն-Ը-Կիխոտ) ստեղծման 300-ամյակի կապակցությամբ: Բանախոսը բացահայտեց Չոպանյանի՝ ռուս գրականության նկատմամբ հետաքրքրության թե՛ գեղարվեստական, թե՛ պատմաքաղաքական դրդապատճառները՝ կապված հայության արևելահայ ու արևմտահայ հատվածների մերձեցմանը նպաստելու խնդրին: Ու թեև «Անահիտի» ռուս թարգմանությունների բաժինը հարուստ չէր, սակայն Չոպանյանին հաջողվում էր արևմտահայ գրական նոր սերնդի հետաքրքրություններն ուղղել դեպի ռուս գրականություն, ռուսական գրական կյանք, դպրոցներ և ուղղություններ: Այսպիսով՝ «Անահիտը», առաջնորդվելով «Մշակույթը՝ որպես ազգային ու քաղաքակրթության գոյության հենասյուն» սկզբունքով, դարձավ նաև ռուս գրականության տարածողներից մեկը մեզանում և նպաստեց հայ թարգմանական ժառանգության զարգացմանը: Այն հարստացրեց հայ գեղարվեստական մտածողությունը, ընդլայնեց եվրոպական գրականությամբ սնվող, ռուսերեն գրեթե չիմացող արևմտահայ ընթերցողի գեղարվեստական հետաքրքրությունների շրջանակը:

Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող Հայագիտական ամբիոնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու **Աիդա Մարանջյան-Մարտիրոսյանը** (Ռուսաստան, Մոսկվա) հանդես եկավ «Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսի գեղագիտական ծրագիրը ազգային բանաստեղծության ակունքներում» զեկուցումով:

Կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց մայիսի 18-ին: *Առաջին նիստում* (նիստի նախագահ՝ Լիլիթ Արզումանյան) ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա Քամալյանը** ««Անահիտ» հանդեսի ներդրումը շահինագիտության մեջ» բանախոսության մեջ քննության առավ Ա. Չոպանյանի հոդվածները Է. Շահինի մասին, ֆրանսիացի առաջատար քննադատներ Արսեն Ալեքսանդրի, Ռոժե Մարքսի, Գյուստավ Կանի, Կամիլ Մոկլերի և ուրիշների թարգմանական հոդվածները «Անահիտ»-ում, ինչպես նաև Ա. Չոպանյանի և Է. Շահինի նամականին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մանե Մկրտչյանը** հանդես եկավ ««Անահիտ» հանդեսի «Արվեստի էջեր» և արվեստագետներին նվիրված շարքերը» բանախոսությամբ, իսկ Երևանի պետական համալսարանի արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Հռիփսիմե Վարդանյանը** ներկայացրեց «1899-ին «Անահիտ» հանդեսում տպագրված «Գեղարվեստի էությունը և նպատակը» հոդվածը. գեղեցիկն ու հոգեվիճակը իբրև կերպարային ընկալման միջոցներ ժամանակի շրջագծի ներքո» զեկուցումը:

1901 թ. ապրիլին Պիեռ Օբրին այցելել է Արևելյան Հայաստան, ի մոտո ծանոթացել Կոմիտասի գործունեությանն ու ձեռքբերումներին և վերադառնալով՝ իր հուշերն ու մանրակրկիտ նկարագրությունները հրատարակել *Լա Թրիպիուն տը Սէն Ժէրվէ* հանդեսում: Այդ հոդվածների Առաջին գլուխը թարգմանել է Չոպանյանը և հրատարակել «Անահիտում»: Լիբանանի Քասլիքի Ս. Հոգի համալսարանի երաժշտության ամբիոնի երաժշտական բարձր ուսման վարիչ և դասախոս, երաժշտագիտության դոկտոր, պրոֆեսոր **Էդուարդ Թորիկեանը** (Լիբանան, Բեյրութ) «Բիեռ Օպրի. ֆրանսացի երաժշտագէտ-հայագէտի ներդրումը հայ երաժշտութեան ուսումնասիրութեան և տարածման մէջ» զեկուցման մեջ, թերթելով «Անահիտի» առաջին տարիների համարները, բացահայտեց, թե «Օբրի ինչպէ՛ս մօտիկ էր հայութեան, ինչպէ՛ս Փարիզահայ Արուեստի Երեկոյթներուն ոչ թէ միայն ներկայութիւն արձանագրած էր, այլ նաև՝ բանախօսութիւններով մասնակցած էր անոնց, ինչպէս նաև ֆրանսական այլ հաստատութիւններու մէջ: Չոպանեանի խօսքերով՝ «Պ. Օպռի շատ յուզուած շեշտերով պատկերացուց Հայոց արդի կացութիւնը, և մեր հին ու նոր երաժշտութեան հատուածներուն մէջէն ցուցուց հայ հոգիին ողբագին կամ հաւատալից, միստիքական կամ ազատասէր արտայայտութիւնները»»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Արտեմյանը** «Ռոմանոս Մելիքյանը «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցման մեջ քննության առավ կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ, խմբավար և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական գործունեությանը նվիրված Աղավնի Մեսրոպյանի «Ռոմանոս Մելիքյան» հոդվածը և Արշակ Չոպանյանի «Մահ Ռոմանոս Մելիքեանի» մահախոսականը, ինչպես նաև հանդեսի տարբեր համարներում Ռ. Մելիքյանի մասին առկա անդրադարձները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հասմիկ Համայկյանը** (համահեղինակ՝ **Ալին Հովսեփյան՝** լեզվաբանական գիտությունների թեկնածու, Բարձրագույն հետազոտությունների գործնական դպրոց, Սորբոն, Ֆրանսիա, Փարիզ) հանդես եկավ «Հայկական գորգարվեստին վերաբերող որոշ հարցերի լուսաբանումը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» բանախոսությամբ:

Սուչժոու համալսարանի կերպարվեստի բաժնի հետդոկտորանտ, PhD **Անի Մարգարյանի** (Չինաստան, Նանկին) զեկուցումը նվիրված էր «Անահիտ» հանդեսում ամերիկահայ նկարիչ Հովսեփ Փուշմանի ստեղծագործության մեկնաբանության հարցերին:

Կոնֆերանսի եզրափակիչ՝ *Երկրորդ նիստում* (նիստի նախագահ՝ Մարգարիտա Քամալյան) Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Նարե Նադարյանը** ներկայացրեց «Կին արձանագործները «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցումը, իսկ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական

գիտությունների թեկնածու **Մարիամ Հովսեփյանը՝** «Հայկական հարցը «Անահիտ» հանդեսի մշակույթի և արվեստի խնդիրների կիզակետում (1898-1911 թթ.)» բանախոսությունը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Գայանե Պողոսյանը** ««Ջոկոնդայի» մեկնությունն «Անահիտ» հանդեսի անդրանիկ համարում» զեկուցման մեջ նկատեց, որ 19-րդ դարավերջում, երբ հայկական գրաքննադատական միտքը դեռ նոր էր ծիլեր տալիս, «Անահիտ» հանդեսի առաջին համարում հրապարակված երիտասարդ Արշակ Չոպանյանի՝ Լեոնարդո դա Վինչիի վրձնած Մոնա Լիզա դել Ջոկոնդային նվիրված հոդվածը թերևս եզակի է իր տեսակի մեջ և առանձնանում է հայկական սփյուռքում արվեստագիտական մտքի զարգացման պատմության մեջ: Արշակ Չոպանյանի քննադատական խոսքն իր ոճական առանձնահատկություններով արտացոլում է վերոհիշյալ կենդանագրի հանդեպ ժամանակաշրջանի արվեստագետների գեղագիտական հայացքները:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նաիրա Բալայանը** «Արփիար Արփիարյանը՝ որպես Արշակ Չոպանյանի քննադատության թիրախ «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցման մեջ ներկայացրեց 1901-1907 թթ. «Անահիտ» հանդեսում տպագրված, Արշակ Չոպանյանի և Արփիար Արփիարյանի տարաձայնությունները ամփոփող 4 ընդարձակ հոդվածներ և դրանց առնչակից այլ նյութեր: Բանախոսը վերլուծեց Չոպանյանի և Արփիարյանի բանավիճային բազմաբնույթ խնդիրները՝ կապված ժամանակի քաղաքական ու հասարարական դեպքերին, ազգային հայրենասիրական ընկալումներին, գեղարվեստական և գրականագիտական հարցերին և այլն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ **Ռուզան Անանյանը** «Ռաֆայել Շիշմանյանը և «Անահիտ» հանդեսը» բանախոսության մեջ քննության առավ հայ գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի՝ «Անահիտում» հրատարակված «Անթուան Պուրտէլ» (1930), «Նկարիչ Վ. Մախոխյան» (1937) և «Անհետացող արուեստագէտներ» (1940) հոդվածները:

«Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր հանգրվան արվեստագիտության և գրականագիտության ասպարեզում:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ